

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ՊԱՏԱՎԱՆ ԱԿՆԱՐԿ ՀԱՅԵՐԻ

### ԱՐՏԱԳՆԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(XIX դ. երկրորդ կես- XX դարի 80-ական թթ.)

Հայաստանում արտագնացությունն ունի իր վաղեմի պատմական ավանդույթները, որի քննարկումը հնարավորություն կտա նրա պատճառների, կազմի, մեկնման ժամկետների և այլ հիմնախնդիրների վերաբերյալ ստանալ հարուստ համեմատական նյութեր: Այն իր հերթին կարող է նպաստել ժամանակակից արտագնացության մի շարք հարցերի պարզաբանմանը:

Արտագնացությունը, որը Հայաստանում մեծ մասշտաբներ ընդունեց սկսած XIX դարի երկրորդ կեսից, առաջին հերթին պայմանավորված էր հայ գյուղ ներթափանցած կապիտալիստական հարարերություններով և ազգային մի շարք գործոններով:

*Առաջին*՝ Հայաստանը գերազանցապես ագրարային երկիր էր, որի բնակչության 90%-ը զբաղված էր գյուղատնտեսության մեջ: Գյուղատնտեսությունն այստեղ աչքի էր ընկնում իր զարգացման միակողմանիությամբ՝ հողագործության մեջ գյուղական բնակչության բացարձակ թվի անընդհատ ավելացման տեմպերով: Դա պայմանավորված էր արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակով: հաղորդակցման ուղիների բացակայությամբ, ինչպես նաև գյուղատնտեսությունը վարելու ցածր տեխնիկայով:

Այսպիսի պայմաններում կապիտալիստական հարարերությունների զարգացման հետևանքով գյուղում սկիզբ առած սոցիալական շերտավորման գործընթացը հանգեցրեց նրան, որ գյուղացիության մեծ մասը զրկվեց արտադրության միջոցներից և ստիպված էր

աշխատանք փնտրել արդյունաբերական խոշոր կենտրոններում: Ասկայն Հայաստանում արդյունաբերության զարգացման ցածր մակարդակի չապահովեց գյուղատնտեսության բնագավառից ազատված աշխատանքային ռեսուրսների զբաղվածությունը: Աշխատուժի առաջարկի և պահանջարկի միջև առաջացած իջվումը հանգեցրեց զործազրկության առաջացմանը, որն էլ զբաղվածության ելքը գտնում էր արտագնացության մեջ<sup>1</sup>:

*Երկրորդ*՝ այն պայմանավորված էր Հայաստանի զարգացման պատմական առանձնահատկություններով: Այն բանից հետո, երբ Արևելյան Հայաստանը 1828թ. Թուրքմենչայի հաշտության պայմանագրով միացվեց Ռուսաստանին, սկիզբ առավ Ատրպատականի հայ բնակչության արտագաղթը դեպի Արևելյան Հայաստան: Նրանց թիվը մոտավորապես հասնում էր 40-45 հազար մարդու<sup>2</sup>: Հատկապես մեծ մասշտաբների ներգաղթ տեղի ունեցավ Արևմտյան Հայաստանից 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով: Ֆիզիկական բնաջնջումից փրկվելու համար Արևմտյան Հայաստանից այդ տարիներին ներգաղթեց ավելի քան 90 հազար մարդ<sup>3</sup>: Արևելյան Հայաստանի բնակչության թիվն աճում էր ոչ միայն հայերի, այլև տարբեր էթնիկական ընդհանրությունների՝ քրդե-

<sup>1</sup> *Խոջաբեկյան Վ.*, Հայաստանի բնակչությունը և նրա զրադվածությունը (1828-1978թթ.), Ե., 1979, էջ 62:

<sup>2</sup> *Երիցյան Ա.*, Լմենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն II (1800-1832թթ.), Թիֆլիս, 1894, էջ 333:

<sup>3</sup> *Հակոբյան Թ.*, Հայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագծեր), Ե., 1984, Ե., էջ 417:

րի (եզդիների), ասորիների, ռուսների հաշվին: Վերջիններս վերաբնակվեցին Լոռիում և Սևանա լճի ավազանում: 1850-ական թվականներին Երևանի մահանգում մշտական բնակություն հաստատած ռուսների թիվը հասնում էր 3561 մարդու:<sup>1</sup> Այսպիսի տեղաշարժերը, անշուշտ, հետագայում ազդեցին Արևելյան Հայաստանի բնակչության բնական աճի տեմպերի բարձրացման վրա: Երևանի մահանգում 1897-1913թթ. ընթացքում բնական աճի հաշվին բնակչությունն ավելացավ 206,5 հազարով:<sup>2</sup> Թեև կառավարությունը որոշակի միջոցներ ձեռնարկեց ներգաղթողների նկատմամբ (նրանց բնակեցրեց պետական, վանքապատկան, կալվածատիրական հողերում, ցույց տվեց նյութական որոշակի աջակցություն և այլն), սակայն, պետք է նշել, որ ինչպես տեղի բնակչությունը, այնպես էլ ներգաղթողները ապրում էր նյութական ծանր պայմաններում: Աշխատանքային գործիքների, լծկան ամասունների, սերմնացուի պակասը նրանցից շատերին ստիպում էր բռնել արտագնացության ճանապարհը:<sup>3</sup> Բնակչության աճի համեմատաբար բարձր տեմպերը որոշակի խնդիրներ առաջ բերեցին մահ գյուղի ներքին հողային հարցերում: Այսպես, 1880-ական թվականներին Արևելյան Հայաստանի ամբողջ հողային տարածքը կազմում էր 683885 դեսյատին (1 դեսյատինը 1,092 հեկտար է), որից պետությանն էր պատկանում 91,4%-ը, կալվածատերերին՝ 5,5%-ը, վանքերին ու եկեղեցիներին՝ 2,0%-ը: Մինչդեռ այն գյուղացիներին, որոնք կազմում էրն բնակչության ճնշող մեծամասնությունը, պատկանում էր հողի ընդամենը 0,1%-ը:<sup>4</sup> Ինչպես տեսնում ենք, Արևելյան Հայաստանում առկա էր սակավահողություն, և Երևանի մահանգի գոյության ընթացքում (1850-1914թթ.) բնակչության թիվն աճել էր երեք անգամ, իսկ հողային ֆոնդը մնացել էր անփոփոխ:

Այդուսակից երևում է, որ քսան տարվա ընթացքում գյուղացիների ինչպես օգտա-

գործվող թույլը հողատարածքները, այնպես էլ վարելահողերը կրճատվել են մի քանի անգամ: «Հողի սակավության պատճառով գյուղացիների տնտեսական դրությունը շատ անմախանձելի է, շատ-շատերը գնում են թիֆլիս և Բաքու մշակություն անելու»:<sup>5</sup> Պատկերը նույնն էր մահ Արևելյան Հայաստանի մյուս գավառներում:<sup>6</sup> Այսպիսով, Արևելյան Հայաստանի գյուղացիության արտագնացության **երրորդ** կարևոր պատճառը կարելի է համարել սակավահողությունը:

Այդուսակ 2

Հողային ֆոնդը՝ ըստ ժխերի և շնչերի Նոր Բայազետի գավառում

| Տարեթվեր                         | Վարելահողեր  |              |
|----------------------------------|--------------|--------------|
|                                  | Ըստ ժխերի    | Ըստ շնչերի   |
| 1886                             | 8 դեսյատին   | 0,9 դեսյատին |
| 1906                             | 5 դեսյատին   | 0,6 դեսյատին |
| Օգտագործվող բոլոր հողատարածքները |              |              |
| 1886                             | 13 դեսյատին  | 1,4 դեսյատին |
| 1906                             | 8,4 դեսյատին | 1 դեսյատին   |

**Չորրորդ** պատճառը, մեր կարծիքով, ցարական կառավարության հարկային քաղաքականության ուժեղացումն էր: XIX դարի 80-ական թվականներին մի քանի անգամ աճեց գյուղացիների ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի հարկերի թիվը: Օրինակ՝ 1900թ. հունիսի 12-ի հողային օրենքով ուղղակի տուրքերը Երևանի մահանգում աճեցին 48,5%-ով, իսկ Կարսի մարզում՝ 50%-ով:<sup>8</sup>

**Հինգերորդ**՝ գյուղացիների շրջանում օրեց-օր աճող պարտքերը, որոնք այդ ժամանակ մեծ չափերի էրն հասնում: Նյութերի քննարկումից պարզվում է, որ XX դարի սկզբին այդպիսի պարտքեր ունեին Արարատյան դաշտի 95, Ջանգեզուրի գավառի՝ 8, Սիսիանի՝ 65, Կարսի մարզի՝ 75, Նոր Բայազետի գավառի բնակչության 95%-ը:<sup>9</sup>

Վերը քննարկված գործոնների հետևանքով գյուղացիները տնտեսական վատթար վի-

<sup>5</sup> ԱՀ, գիրք XVIII, Թիֆլիս, 1908, էջ 146:

<sup>6</sup> Այդպիսի նյութ ենք հանդիպում մահ Ե.Լալայանի հավաքած մյուս ազգագրական շրջանների վերաբերյալ, ինչպես մահ առ ժամանակաշրջանի մամուլի էջերում:

<sup>7</sup> Այդուսակը կազմված է «Памятная книжка Эриванской губернии на 1908г.» տվյալների հիման վրա, Эривань 1908, էջ 245:

<sup>8</sup> «Աուրծ», 1901, N5, էջ 273:

<sup>9</sup> «Աշակ», 1909, N152, 1910, N150:

<sup>1</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 134, ց. 81, գ. 2382:

<sup>2</sup> **Խոջաբեկյան Վ.**, նշվ. աշխ., էջ 54:

<sup>3</sup> ԱՀ, գիրք Բ (N 2), Թիֆլիս, 1897, էջ 80:

<sup>4</sup> ՀԺՊ, հ. 6, էջ 33-34:

ճակում էին՝ ծայրահեղ կարիքի ու աղքատության մեջ և ստիպված էին թռնելու արտագնացության ճանապարհը: Մ. Նալբանդյանը, դեռևս ժամանակին անդրադառնալով արտագնացությունը ծնող պատճառներին, նշում էր. «Աղքատությունը ստիպում է նորան թողնելու յուր տունը, յուր ընտանիքը, յուր ամուսինը, յուր գավակները և գնալ Պոլիս կամ այլ քաղաք աղքատությունից ազատվելու համար: Բայց այդ տեղում ևս նորան հանդեպ է դուրս գալիս էապես նույն աղքատությունը, գուցե մի փոքր քաղաքային ամոք կերպարներով»<sup>1</sup>: Իսկ «Աշակ» թերթի թղթակիցը, անդրադառնալով Գանձակի գավառի պանդխտությանը, հանգում է նրան, որ իրենց գավառում «Պանդխտությունը կվերանայ այն ժամանակ, երբ կարք կը պակասի մեր գյուղերում. նա (պանդխտությունը՝ Մ.Գ.) աղքատության անրաժան ընկերն է»<sup>2</sup>:

առևտրաարդյունաբերական խոշոր քաղաքների<sup>3</sup>:

Արևելյան Հայաստանից արտագնա աշխատանքի մեկնողների թվաքանակի ինտենսիվության, ուղղվածության, տարիքային և սոցիալ-մասնագիտական կազմի, ինչպես նաև տևողության ժամկետների վերաբերյալ մեզ հասած վիճակագրական տեղեկությունները կցկտուր են և ոչ ամբողջական: Սա պատահական չէ, քանի որ արտագնա աշխատանքը, լինելով տարերային գործընթաց, դժվարությամբ էր հաշվառման ենթարկվում: Վ.Ի. Լեմինը, անդրադառնալով Ռուսաստանում ոչ հողագործական արտագնացությանը, նշում է. «Այն ընակչության շրջիկ ընույթի պայմաններում նրանց դժվար է հաշվառել առանձին կենտրոնների մարդահամարներում: Բացի այդ, մարդահամարները սովորաբար ծնոան են կառարվում, մինչդեռ արհեստագործական

Աղյուսակ 3

Գյուղացիության արտագնացության տեմպերը Նոր Բայազետի գավառում 1880-ական թթ.\*

| Նոր Բայազետի գավառ         | Բնակչություն |                        |                        | Մեծածնների թիվը | Արագնացների թիվը %-ով: |                      |
|----------------------------|--------------|------------------------|------------------------|-----------------|------------------------|----------------------|
|                            | Ընդամենը     | Այդ թվում՝ արական սեռի |                        |                 | Այդ թվում              |                      |
|                            |              | Ընդամենը               | Նրանցից աշխատունակները |                 | տղամարդիկ              | Աշխատունակ տղամարդիկ |
| Գավառի հարավարևմտյան մաս   | 38495        | 19449                  | 6400                   | 2230            | 11,5                   | 34,8                 |
| Գավառի հյուսիսարևելյան մաս | 45721        | 23791                  | 10500                  | 5065            | 21,2                   | 48,0                 |
| Ընդամենը                   | 84216        | 43240                  | 16900                  | 7295            | 16,8                   | 43,1                 |

\*Материалы..., т. 1, Тифлис, 1885, с. 345; т.IV, ч. II, Тифлис, 1886, с. 49.

Այն ընակչության մեծամասնության համար ծառայել է որպես ընտանիքի նյութական նվազագույն պահանջները թավարարելու կարևորագույն աղբյուր և նրանց կապել է

րանվորները տնից հեռանում են գարնանը»<sup>4</sup>: Պաշտոնական այս կամ այն տվյալների համար հաճախ հիմք էր ծառայում արտագնացության համար գյուղացու ստացած անձ-

<sup>1</sup> Նալբանդյան Մ., Երկեր, հ.4, Ե., 1983, էջ 64:

<sup>2</sup> «Աշակ», 1899, N119:

<sup>3</sup> Գալստյան Մ., Հայկական ԽՍՀ-ում սեզոնային արագնացության հարցի շուրջը, Երիտասարդ գիտնականների VII կոնֆերանսի զեկուցումների թեզիսներ, Ե., 1986, էջ 47-48:

<sup>4</sup> Ленин В.И., Полн. собр. соч., т.3, с. 570.

նագիրը, որը, ինչպես նկատում են որոշ հեղինակներ, նվազեցնում էր Հայաստանից մեկնող արտագնացների թվաքանակը<sup>1</sup>: Արտագնացությունը կրում էր սեզոնային բնույթ: Գյուղացիները, չկտրվելով գյուղատնտեսությունից ինչպես հանրապետության ներսում, այնպես էլ դրանից դուրս, իմբոլվին կամ անհատապես արտագնացության էին մեկնում ծննդանր՝ գյուղատնտեսական սեզոնի ավարտից հետո, և ընդգրկվում տարբեր տեսակի աշխատանքներում: Իսկ արտագնացների որոշ մասն էլ, որոնք մեկնում էին արդյունաբերական խոշոր կենտրոններ, այնտեղ մնում էին երկար տարիներ կամ հաստատում էին մշտական բնակություն՝ դառնալով արդյունաբերական ձեռնարկությունների կադրային բանվորներ, սակայն նրանք իրենց կապերը չէին իսկույն հայրենի գյուղի հետ<sup>2</sup>: Արտագնացության այս ձևը շատ էր տարածված այն ընտանիքներում, որտեղ կային երկու և ավելի աշխատունակ հասակի տղամարդիկ: Հիմնականում արտագնացության էի մեկնում ընտանիքի երիտասարդ կամ ամուսնացած տղաներից մեկը<sup>3</sup>:

Գյուղացիների հետ արտագնացության էին մեկնում նաև արհեստավորները, որոնք շուկայի նեղացման պայմաններում ստիպված էին մեկնել այլ վայրեր՝ իրենց արհեստները կիրառելու համար: Արտագնացությունը հատկապես բարձր տոկոս էի կազմում որմնա-

դիրների, ատաղձագործների, հյուսների, բրուտագործների և ներկարարների շրջանում: Օրինակ՝ Նոր Բայազետի գավառում, որտեղ շատ էի ներկարար արհեստավորների թիվը, նրանցից 70-ը հողագործական աշխատանքները վերջացնելուց հետո մեկնում էին Թիֆլիս կամ այլ վայրեր՝ իրենց արհեստով զբաղվելու<sup>4</sup>: Կամ զանգեզուրցիները, որոնք բրուտագործության վարպետներ էին, իրենց արհեստը կիրառում էին Հայաստանի տարբեր շրջաններում<sup>5</sup>:

Ըստ վիճակագրական տվյալների՝ XIX դարի 60-80-ական թվականներին Արևելյան Հայաստանի տարբեր գավառներից մեկնող արտագնացների թիվն աննշան էի: Օրինակ՝ այդ տարիներին Նոր Բայազետի գավառից արտագնացության է մեկնել 270 մարդ, Նախիջևանից՝ 150, Օրդուբադից՝ 220, Երևանից՝ 100,<sup>6</sup> 1870-ական թվականներին նշված 4 գավառներից՝ շուրջ 2500 մարդ<sup>7</sup>:

Արտագնացների թվաքանակը Արևելյան Հայաստանում զգալիորեն աճեց 1880-ական թվականներից: Ըստ «Նոր դար» թերթի տվյալների՝ 1884թ. 10 ամսվա ընթացքում Ջանգեզուրի միայն 36 գյուղերից Բաքու և այլ վայրեր արտագնացության էի մեկնել 2608 մարդ<sup>8</sup>, Շարուր-Ղարալագյազից՝ աշխատունակ ընկալության 10%-ը<sup>9</sup>:

Աղյուսակից երևում է, որ Նոր Բայազետի գավառի հարավարևմտյան և հյուսիսարևելյան մասերից Երևանի մահանգի այլ վայրեր, այնպես էլ մահանգից դուրս արտագնացության էի մեկնել աշխատունակ բնակչության համապատասխանաբար 34,8 և 48,0%-ը: Միաժամանակ, նույն աղբյուրից տեղեկանում ենք, որ այդ տարիներին տղամարդկանց հետ արտագնացության են մեկնել նաև կանայք, որոնց թվաքանակի վերաբերյալ չկան հավաստի վիճակագրական տվյալներ. «Մշտա-

<sup>1</sup> Այդ հարցերով զբաղվող Դանիելովիչը կարծում է, որ XIX դարի վերջին ամեն տարի Հայաստանից մեկնող արտագնացների թիվը հասնում էի 10-15 հազար մարդու, իսկ տնտեսագետ Ա.Բադալյանի կարծիքով, այդ թվաքանակը պակասեցված է, քանի որ գյուղացիները մեկնում էին նաև գյուղի ավագի աված վկայագրերով: Տե՛ս *Бадалян А.*, Население Армении со времени присоединения ее к России и до наших дней, Вестник общественных наук АН АрмССР, 1953, №5, с. 60:

<sup>2</sup> «Մշակ» թերթի էջերից ծանոթանում ենք, որ Գանձակի գավառից արտագնացության էին մեկնում 15-ից մինչև 40 տարեկան տղամարդիկ, որոնք օտարության մեջ մնում էին երկու-երեք տարի: Այդ ընթացքում նրանք մեկ անգամ գալիս էին գյուղ և ընտանիքի համար ընտրում փող, ինչպես նաև հագուստներ: Մոտավորապես մեկ շաբաթ մնալով աանը՝ նրանք նորից վերադառնում էին: Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1899, №119:

<sup>3</sup> Այդ կապակցությամբ *Ե.Լալայանը* նշում է. «.....նույնիսկ պանդխտությունը շատ անգամ ընտրությամբ և հերթով տեղի կունենա: Պանդխտության զնացողը պետք է դրամ աշխատի, իսկ տանը մնացողը՝ տունը պահե»: Տե՛ս ԱՀ, գիրք Ե (N1), Թիֆլիս, 1899, էջ 52:

<sup>4</sup> ԱՀ, Թիֆլիս, 1908, գիրք XVIII, էջ 136:

<sup>5</sup> *Լիսիցյան Ս.*, նշվ. աշխ., էջ 163:

<sup>6</sup> Сборник статистических сведений о Кавказе, Тифлис, 1869, т.1, отдел 3, с. 33, 49, 54, 59, 67.

<sup>7</sup> ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 891, ք. 18, 27, 35:

<sup>8</sup> «Նոր դար», 1885, №139:

<sup>9</sup> «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края» (далее Материалы....), Тифлис, 1886, т.1, ч. II, с. 140.

կան վաստակի են մեկնում, - գրում է Պարվոցկին,- մի քանի գյուղերի բնակչություն, ովքեր զարմանը կամ աշնանը ազատ են լինում դաշտային աշխատանքներից.... Ջաղալու և Գետակ Բուլախ հայկական գյուղերում արտազնացության են մեկնում նաև կանայք, ովքեր Շարուր-Ղարալուգյազի և Երևանի գավառներում գբադվում էին միայն ռամիակի հավաքման աշխատանքներով»<sup>1</sup>:

Երևանի նահանգի հետ համեմատած՝ արտազնացության բարձր տեմպեր են դիտարկվել նաև Լեռնային Ղարաբաղի<sup>2</sup> և Գանձակի գավառներում<sup>3</sup>, որոնք XIX դարում գտնվում էին Ելիզավետպոլի նահանգի կազմում<sup>4</sup>:

XIX դարի 90-ական թվականներին արտազնացությունն ընդունեց մեծ մասշտաբներ: 1891թ. միայն Երևանի, Սուրմալուի և Նախիջևանի գավառներից մեկնել է 4546 մարդ, 1892թ.՝ 4655, 1893թ.՝ 5326 մարդ<sup>5</sup>, իսկ Նոր Բայազետի գավառից, ինչպես նկատում է տնտեսագետ Մ.Ա. Ադոնցը, արտազնացության է մեկնել աշխատունակ տղամարդ ընկալության 18-20%-ը<sup>6</sup>: «Արտազնա գրադմունքը,- գրում է Երևանի նահանգապետը,- տարեցտարի ընդունում էի ավելի ու ավելի նշանակալի չափեր: 1898թ. տարբեր քաղաքներ (Թիֆլիս, Բաքու, Բաթում և այլն) դատումների է մեկնել 2000 մարդ»<sup>7</sup>:

Արտազնացության այսպիսի տեմպերը պայմանավորված էին 1892-1894 թվականներին երկիրում ռոնկված սովով: Այդ գործընթացին իրաճանց նաև հադորդակցման ուղիների ընդլայնումը: Թիֆլիս-Բաքու և Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղային գծի

կառուցումով Երևանը միացվեց Անդրկովկասի խոշոր արդյունաբերական կենտրոններին: Ժամանակակիցների վեսայությամբ՝ «Բազու. Թիֆլիզյան երկաթուղու գիծն ռացելուն պես, Ղարաբաղի, Շամաքու, Թիֆլիզի, Գանձակի, Երևանի և ուրիշ տեղերի գյուղացիք վազեցին Բազու...»<sup>8</sup>: ճանապարհներ կառուցվեցին և վերանորոգվեցին Երևանի նահանգի ներսում: Արտազնացությանը մասնակցում էին ոչ միայն հայեր, այլև այնտեղ ապրող տարրեր էթնիկական խմբեր՝ քրդեր, ռուսներ, հույներ: Անդրադառնալով Արևելյան Հայաստանում բնակվող քուրդ ընտանիքների արտազնացության ինդիկներին: XX դարի սկզբին Արևելյան Հայաստանում քրդերի թվաքանակի հասնում էի 37հազ. մարդու, որից 60%-ը ապրում էի Էջմիածնի, Սուրմալուի և Ալեքսանդրապոլի գավառներում: Նրանք իրենց տրամադրության տակ ունեին 192,307 դեսյատին հողաբաժին, որից 8,483-ը դեսյատին վարելահող<sup>9</sup>: Քրդերի 27,4%-ը վարում էի նստակյաց, իսկ 72,6%-ը՝ քոչվորական և կիսաքոչվորական կյանք<sup>10</sup>: Նրանք հիմնականում գրադվում էին ոչխարաբուծությամբ:

*Աղյուսակ 4*  
**Քուրդ ընտանիքների սոցիալական դրությունը XX դարի սկզբին՝ ըստ ունեցվածքի<sup>11</sup> (%-ով)**

| Գավառներ      | Հարստությունը ընտանիքներ | Ունևոր ընտանիքներ | Միջակ ընտանիքներ | Աղքատ ընտանիքներ |
|---------------|--------------------------|-------------------|------------------|------------------|
| Սուրմալու.    | 6,25                     | 13,62             | 44,08            | 36,05            |
| Էջմիածին      | 9,30                     | 9,30              | 51,2             | 30,02            |
| Ալեքսանդրապոլ | 7,2                      | 15,9              | 44,9             | 32,0             |

Ինչպես երևում է 4-րդ աղյուսակից, նշված գավառներում քրդական ծխերի մոտավորապես 1/3-ը պատկանում էի աղքատ ընտանիքների դասին: Այսպիսի պայմաններում որակավորում պահանջող աշխատանքներին կամ այլ գբադմունքներին անպատրաստ քրդերի

<sup>1</sup> Там же, с. 345.

<sup>2</sup> **Мкртчян А. А.**, Общественный быт армян Нагорного Карабаха (Вторая половина XIX-начало XXвв). Дисс. на соиск. уч. ст. канд. ист. наук, М., 1988, с. 56-59.

<sup>3</sup> Գանձակի Բարսում գյուղի 200 տնտեսություն, որից Բաքու, Բարումի, մասամբ նաև Թիֆլիս էին մեկնել 200, իսկ Գետաշեն գյուղից՝ 250 արտազնացներ: Տե՛ս «Աշակ», 1899, N119:

<sup>4</sup> Нагорный Карабах. Историческая справка (ред. **Галоян Г.А., Худавердян К.С.**), Е., 1988, с. 16.

<sup>5</sup> **Адонц М.А.**, указ. соч., с. 354.

<sup>6</sup> Там же., с.354.

<sup>7</sup> Обзор Эриванской губернии за 1908г., Эривань, 1909, с. 8. Այդ մասին տե՛ս նաև **Համբարյան Ա.**, Արևելյան Հայաստանի գյուղացիության արտազնացության մասին, ԼՀԳ, 1985, N 8, էջ 26:

<sup>8</sup> **Չովսեփյան Ղ.**, Ակնարկներ ուսիացի և մանեթական հայերի մասին, Թիֆլիս, 1904, էջ 26:

<sup>9</sup> **Մուսկյան Դ.**, указ. Соч., с. 31.

<sup>10</sup> Там же, с. 31.

<sup>11</sup> Там же.

համար արտագնացությունը դադարում էի եկամտի կարևորագույն աղբյուրներից մեկը:

Աղյուսակ 5

**Քուրդ ընտանիքների եկամտի ծնավորման աղբյուրները XX դարի սկզբին<sup>1</sup> (%-ով)**

| Գավառներ      | Ամստունների վաճառքից | Աւտաժնա գրադուլից | Տնայնագործական աշխատանքից | Փոխառությունից | Ամբողջը |
|---------------|----------------------|-------------------|---------------------------|----------------|---------|
| Սուրմայու     | 42                   | 28                | 7                         | 23             | 100     |
| Էջմիածին      | 50,0                 | 44,3              | 5,7                       | -              | 100     |
| Ալեքսանդրապոլ | 18,7                 | 11,3              | 13,8                      | 56,2           | 100     |

Նշված գավառներում, ինչպես տեսնում ենք, արտագնա գրադուլներից ստացվում է ընտանիքի եկամուտների շուրջ մեկ երրորդը (աղ.5): Արտագնա քրդերի թիվը, ըստ աշխատունակ հասակի տղամարդ բնակչության, ամեն տարի տատանվում էի 23,1-ից մինչև 87,3%-ը: Ի տարբերություն հայերի՝ նրանք հիմնականում հայկական գյուղերում կամ հարուստ քրդերի մոտ գրադվում էին անասնապահությամբ, իսկ որոշ մասն էլ ընդգրկված էի դաշտային աշխատանքներում կամ գրադվում էի բեռնակրությամբ<sup>2</sup>:

Ինչ վերաբերում է ոռոս աղանդավորներին և հույներին, ապա նրանք նույնպես գյուղատնտեսական սեզոնը վերջացնելուց հետո մեկնում էին արտագնա աշխատանքի: Եթե ոռոս աղանդավորները գերադասում էին գրադվել կառավարությանը կամ խոշոր խճուղիներում քառանիվ սայլերով բեռնափոխադրումներ էին կատարում, ապա հույները, որպես բաթճ որակավորում ունեցող քարտաշներ, աշխատում էին երկաթուղային և այլ խոշոր շինարարություններում: Նրանց միջին աշխատավարձը 4-5 ամսվա ընթացքում տատանվում էի 120-200, իսկ սևագործ բանվորների՝ 40-100 ռ. սահմաններում<sup>3</sup>:

Արտագնացության չափերը մեծ էին նաև օսմանյան Թուրքիայի տիրապետության ներ-

քո գտնվող Արևմտյան Հայաստանում: Չխորանալով մանրամասների մեջ՝ համեմատության համար նշենք, որ, Ա.Հովհաննիսյանի բերած ոչ լրիվ տվյալներով, 26 տարվա ընթացքում արտագնացների թիվը այստեղ աճեց մոտավորապես չորս անգամ<sup>4</sup>: Եթե 1860-ական թվականներին այն կազմում էր 15 հազ. մարդ, ապա 1886թ. միայն Պոլսում նրանց թիվը հասնում էր 50-60 հազարի<sup>5</sup>:

«Արծազանք» պարբերականի էջերից տեղեկանում ենք, որ յուրաքանչյուր ընտանիք ուներ մեկ-երկու և նույնիսկ չորս-հինգ պանդուխտ<sup>6</sup>: Նրանք հիմնականում մեկնում էին Կ.Պոլիս, որտեղ գրադվում էին ջրկիրությամբ, բեռնակրությամբ: Բացի Կ.Պոլսից, աշխատում էին նաև Սիրիայի մահուդի ձեռնարկություններում, Կեսարիայի կտավագործական արհեստանոցներում, Աղանայի բամբակի պլանտացիաներում: Ծանր էին նրանց ինչպես աշխատանքային, այնպես էլ կյանքի պայմանները: Արտագնացները գիշերում էին հրապարակներում և կեղտոտ իջևանատներում: Այդ րոլորը հանգեցնում էի նրան, որ հաճախ պանդուխտի կյանքն ընդհատվում էր արտագնա աշխատանքի վայրում:

Արտագնացությունը, լինելով ընդհանուր երևույթ, բնութագրական էի ոչ միայն Հայաստանի, այլև ցարական Ռուսաստանի տարբեր նահանգների համար: Վ.Ի.Լենինի գնահատմամբ, XIX դարի վերջին կենտրոնական նահանգներից արտագնացության մեկնողների թիվը գերազանցել է 6 միլիոնը<sup>7</sup>:

XX դարի սկզբին Արևելյան Հայաստանի չորս գավառներից արտագնացության է մեկնել 134 հազ. մարդ (աղ. 6):

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 7-ի տվյալները, 1901թ. հետ համեմատած՝ 1913թ.

<sup>4</sup> Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., ե.1, էջ 229-230:

<sup>5</sup> Միայն 1878թ. արտագնացության են դիմել Վանի գավառի 3800, Սուշից՝ 1700, Ադերից՝ 5000, Քըղից՝ 300, Բիթլիսից՝ 2800, Քեմաիից՝ 2000, Դերջանից՝ 1000 մարդ: Տե՛ս ՀԱՍՀ ԳԱ գրականության և արվեստի ինստիտուտի Թ.Ազատյանի արխիվ, գ.40, թ.6, գ.57, թ.87, գ.59, թ.7:

<sup>6</sup> Մուշի խաս գյուղից, որն ուներ 250 առև, արագնացության էր մեկնում 300-400 մարդ, Նորաշենը՝ 200 տուն, ուներ 300 պանդուխտ և այլն: Տե՛ս «Արծազանք», 1887, էջ 269:

<sup>7</sup> Լենին В.И., Полн. собр. соч., т.3, с. 573.

<sup>1</sup> Там же. с.33.

<sup>2</sup> Там же. с.33.

<sup>3</sup> Обзор Эриванской губернии за 1904г., с. 12-13.

արտագնացների թիվը աճեց մոտ 10 անգամ (48723 մարդ), իսկ 1914թ. ստացված գյուղատնտեսական հաբուստ բերքի շնորհիվ նրանց թիվը կրճատվեց 15 հազարով: Երեք տարվա ընթացքում արտագնացության էր դիմել 119,5 հազար մարդ, որից 37,5%-ը՝ նահանգի սահմաններ, 53%-ը՝ նահանգի սահմաններից դուրս, 5%-ը՝ արտասահման: Նրա տեմպերը բարձր էր լեռնային և նախալեռնային շրջաններում,

Աղյուսակ 6

**Արևելյան Հայաստանի չորս գավառներից մեկնաժների թիվը 1901թ.<sup>1</sup>**

| Գավառների անվանումը | Մեկնողների թվաքանակը |
|---------------------|----------------------|
| Նոր Բայազետ         | 5000                 |
| Ալեքսանդրապոլ       | 3200                 |
| Շարուր-Դարայագյազ   | 2200                 |
| Նախիջևան            | 3000                 |
| Ընդամենը            | 13400                |

որն արդեն վերը նշված գործոնների հետ պայմանավորված էր նաև իյիստ բնակչի-մայական պայմաններով: Գյուղատնտեսական սեզոնը ավարտվելուց հետո արտագնացներն աշխատանքի էին ընդգրկվում Երևանի նահանգի ցածրադիր շրջաններում՝ րամ-

Արևելյան Հայաստանի առավել զարգացած տնտեսական կենտրոններից մեկն էր: Այստեղ էրն կենտրոնացված գյուղատնտեսական թեքում ունեցող մի շարք ձեռնարկություններ, ինչպես նաև արհեստագործական համքարություններ, որոնք որոշ չափով պայմանավորում էրն տեղի աշխատանքային ռեսուրսների գրադվածությունը: Արարատյան դաշտը աչքի էր ընկնում նաև իր բերրի հողերով և ագրոկլիմայական բարենպաստ պայմաններով: Նահանգի սահմաններից դուրս արտագնացները հիմնականում մեկնում էրն առևտրաարդյունաբերական խոշոր կենտրոններ՝ Բաքու, Թիֆլիս, Բաթում, Գրոզնի, Ելիզավետպոլ, հաճախ նաև՝ Միջին Ասիա, Սիբիր և կատարում տարբեր աշխատանքներ: Արտասահման մեկնող արտագնացները հաստատվում էին Հունաստանում և Ամերիկայում՝ «հաղադ օվկիանոսի ափերին, Լոս Անջելես քաղաքում և նրա շրջակայքում»<sup>3</sup>: Ձանգվածային այդպիսի արտագնացության հետևանքը լինում էր այն, որ անվերադարձ միգրացիայի պատճառով, ինչպես Անդրկովկասում, այնպես էլ նրա սահմաններից դուրս ավելանում էր հայ գաղութների թիվը<sup>4</sup>:

Աղյուսակ 7

**Արտագնացների թիվը Երևանի նահանգից 1912-14թթ.\***

| Գավառների անվանում | Գյուղերի թիվը, որոնցից մեկնել են |      |      | Մեկնողների թվաքանակը (մարդ) |       |       |                                  |       |       | Արտասահման |      |      | Տարեկան վաստակը ոռորլիններով |         |         |
|--------------------|----------------------------------|------|------|-----------------------------|-------|-------|----------------------------------|-------|-------|------------|------|------|------------------------------|---------|---------|
|                    |                                  |      |      | Երևանի նահանգի սահմաններում |       |       | Երևանի նահանգի սահմաններից դուրս |       |       |            |      |      |                              |         |         |
| Տարեթվեր           | 1912                             | 1913 | 1914 | 1912                        | 1913  | 1914  | 1912                             | 1913  | 1914  | 1912       | 1913 | 1914 | 1912                         | 1913    | 1914    |
| Եռանակ             | 79                               | 84   | 84   | 1758                        | 1912  | 1859  | 195                              | 594   | 562   | 6          | 82   | 120  | 36230                        | 237400  | 284900  |
| Երմիածին           | 120                              | 120  | 120  | 3121                        | 5503  | 3361  | 1157                             | 2332  | 1324  | 328        | 26   | 52   | 373565                       | 441500  | 726400  |
| Սյունյալու         | 126                              | 152  | 152  | 820                         | 936   | 460   | 751                              | 845   | 642   | 150        | 122  | 105  | 151410                       | 162200  | 119000  |
| Նոր Բայազետ        | 132                              | 131  | 123  | 3049                        | 3619  | 2893  | 7361                             | 9308  | 3697  | 41         | 271  | 76   | 873780                       | 898000  | 1140700 |
| Ալեքսանդրապոլ      | 148                              | 154  | 154  | 3821                        | 3121  | 2440  | 5237                             | 9331  | 7776  | 515        | 1548 | 1265 | 832460                       | 1702400 | 1897100 |
| Շարուր-Դարայագյազ  | 96                               | 100  | 100  | 554                         | 543   | 542   | 1750                             | 1863  | 1289  | 1          | 1    | -    | 88950                        | 160600  | 772100  |
| Նախիջևան           | 127                              | 120  | 120  | 1424                        | 1812  | 1452  | 3917                             | 4886  | 3801  | 1077       | 87   | 61   | 350285                       | 473700  | 425100  |
| Ընդամենը           | 828                              | 861  | 853  | 14547                       | 17446 | 13007 | 20368                            | 29159 | 19091 | 2118       | 2137 | 1679 | 2706680                      | 4075800 | 4670400 |

\*Աղյուսակը կազմվել է Обзор Эриванской губернии за 1912г., Эривань, 1913, с. 14, ...за 1913 г., Эривань, 1914, с. 16, ... за 1914 г Эривань, 1915, с. 17:

բակի պլանտացիաներում և մնում մինչև ըեր-բահավաքի ավարտը<sup>2</sup>:

Արտագնացության չափերը համեմատաբար փոքր էին Արարատյան դարշտում, որը

<sup>1</sup> Աղյուսակը կազմված է Обзор Эриванской губернии за 1901г., с. 11.

<sup>2</sup> Труды съезда хлопководов в гор. Тифлисе, 1-6 ноября, 1912г., т. II, ч. II, Тифлис, 1914, с. 76.

<sup>3</sup> Նշված վայրերում նրանք կառուցում էին ֆերմաներ, զբաղվում րանջարարություններով: Նրանց մեջ կային նաև ծանր աշխատանքներ կատարողներ, որոնք վարձատրվում էին շատ ցածր: Չնայած միգրանտները ապրում էին ծանր պայմաններում, տարեցտարի նրանց թվաքանակը աճում էր: Ст'и Итоги урожая и состояние скотоводства в Закавказье в 1913г., Тифлис, 1914, ч. I, с. 22-23.б

<sup>4</sup> Григорьянц А.А., Армяне в Средней Азии, Е., 1984, 1984, с. 21-22.

Արտագնա աշխատանքի հաշվին XIX դարի վերջին Բաքվի նավթարդյունաբերական ձեռնարկություններում հայ ռանվորների թիվը կազմում էր 20%: Այսպես, 1897թ. այնտեղ աշխատող ռանվորների 29%-ը հայեր էին, որոնց 43%-ը կադրային ռանվորներ էին, իսկ 20%-ից ավելին՝ վարպետներ: Հայերի տեսակարար կշիռը բարձր էր նաև շինարարության ընդհանուրում և ծխախոտի գործարաններում<sup>1</sup>: Նրանց ընտանեկան դրության մասին որոշակի պատկերացում է տալիս աղյուսակ 8-ը:

Աղյուսակ 8

**Բաքվի նավթարդյունաբերական ձեռնարկություններում աշխատող ռանվորների ընտանեկան դրությունը ըստ ազգությունների 1897թ. (%-ով)<sup>2</sup>**

| Ազգություններ                 | Ընտանեկան դրությունը |      |             | Ապրում է     |       |
|-------------------------------|----------------------|------|-------------|--------------|-------|
|                               | Սմուսնացած           | Այրի | Չամուսնացած | Ընտանիքի հետ | Սեռակ |
| Ռուսներ և եվրոպական այլ ազգեր | 79,2                 | 1,6  | 19,2        | 73,7         | 26,3  |
| Հայեր և վրացիներ              | 46,6                 | 0,4  | 53,0        | 25,3         | 74,7  |
| Կազանի թաթարներ               | 62,5                 | 0,6  | 36,9        | 17,5         | 82,5  |
| Տեղի թաթարներ                 | 50,0                 | 0,9  | 49,1        | 4,7          | 95,3  |
| Պարսիկներ                     | 62,1                 | 2,5  | 35,4        | 8,2          | 91,8  |
| Լեզգիներ                      | 51,1                 | 1,4  | 47,5        | 19,7         | 80,3  |

Թեև աղյուսակում հայերը և վրացիները տարանջատված չեն, և ներկայացված թիվը վերաբերում է երկու ազգերին, այնուամենայնիվ, ակներև է, որ աշխատողների մեջ ամուսնացած ռանվորները կազմում են 46,6%, իսկ չամուսնացածները՝ 53%: Միաժամանակ աղյուսակից երևում է, որ համեմատաբար բարձր տոկոս է կազմում (74,7%) միայնակ ապրողների թիվը: Վերջինս ռացատրվում է նրանով, որ ցածր աշխատավարձի պատճառով նրանցից շատերը զերադասում էին ընտանիքը թողնել հայրենի ընկավայրում: Բաքվում ընտանիքով ապրողների տեսակարարը՝ կշիռը կազմում էր 25,3%: Անկախ արտագնացու-

թյան տևողությունից՝ նրանց 91%-ը իրենց կապերը պահպանում էր հայրենի գյուղի հետ (տե՛ս աղ. 9):

Այդպիսի կապերի շնորհիվ արտագնացները գյուղական կենցաղ էին ներմուծում քաղաքային մշակույթի մի շարք տարրեր, որն առաջին հերթին դրսևորվում էր տան հարդարանքում, հագուստում, ազատ ժամանակի կազմակերպման ձևերում<sup>3</sup>: Արտագնացության հետևանքով գյուղերում սկսեցին կառուցել քաղաքային տիպի լուսավոր և բարձր տներ: Արտագնացների շփումները տարրեր ազգերի մարդկանց հետ նպաստեցին նրանց հասարակական-քաղաքական հայացքների ձևավորմանը, արժեքային կողմնորոշման փոփոխությանը, ինչպես նաև լեզվական գործընթացների զարգացմանը. «...Գերդաստանի անդամներից մի քանիսը գաղթում են քաղաքներում աշխատելու,՝ գրում է Ե.Լալայանը, ընդունում են այնտեղի զաղափարներն ու սովորույթները: Իրենց վաստակը ամբողջովին տան մեծին չեն ուղարկում, շատ անգամ ցանկանում են կնոջը իրենց մոտ տանել, իրենց երեխային ուսման տալ...»<sup>4</sup>:

Աղյուսակ 9

**Բաքվի նավթարդյունաբերական ռանվորների կապը հայրենի գյուղի հետ՝ ըստ ազգությունների 1897թ. (%-ով)<sup>5</sup>**

| Ազգեր                         | Պահպանում են կապը հայրենիքի հետ |                       |            | Ընդամենը գյուղի հետ կապ ունեցողները | Գյուղի հետ կապ չունեցողները |
|-------------------------------|---------------------------------|-----------------------|------------|-------------------------------------|-----------------------------|
|                               | Տնտեսություն ունեցող            | Տնտեսություն չունեցող | Դուրսգոյակ |                                     |                             |
| Ռուսներ և եվրոպական այլ ազգեր | 42,7                            | 11,2                  | 6,1        | 60,0                                | 40,0                        |
| Հայեր և վրացիներ              | 72,3                            | 10,4                  | 8,3        | 91,0                                | 9,0                         |
| Կազանի թաթարներ               | 73,2                            | 10,9                  | 8,0        | 92,1                                | 7,9                         |
| Տեղի թաթարներ                 | 57,0                            | 13,0                  | 17,0       | 87,0                                | 13,0                        |
| Պարսիկներ                     | 74,4                            | 4,0                   | 14,6       | 93,0                                | 7,0                         |
| Լեզգիներ                      | 25,2                            | 16,4                  | 50,4       | 92,0                                | 8,0                         |

<sup>3</sup> Ըստ Ե.Լալայանի՝ Ալաստան գյուղի բնակիչները (Ջավախքի պատմաազգագրական շրջան), որոնք արտագնացության էին մեկնում Կ.Պոլիս, մյուս գյուղացիների հետ համեմատած, ավելի զարգացած էին և կրթված, իսկ տները փայլում էին մաքրությունից: Տե՛ս ԱՅ, գիրք Ա, Շուշի, 1896, էջ 174:

<sup>4</sup> ԱՅ, գիրք X, Թիֆլիս, 1903, էջ 126:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 35:

<sup>1</sup> ՀԺՊ, հ. 6, էջ 74:

<sup>2</sup> Աղյուսակը կազմված է Стопанни А. М., указ. соч., с. 26-27 տվյալների հիման վրա:

Արտագնացությունը հանգեցրեց մի շարք լուրջ ժողովրդագրական հետևանքների, որոնցից են բնակչության սեռատարիքային կառուցվածքի հարաբերակցության խստիշտումը, ընկած աճի դանդաղումը, արտագնացների հաշվին Անդրկովկասի քաղաքային բնակչության ավելացումը: Աղյուսակ 10-ում ներկայացվում է Անդրկովկասի խոշոր քաղաքներում 20-59 տարեկան արական և իգական սեռի բնակչության տեսակարար կշիռը՝ ըստ 1897թ. մարդահամարի տվյալների:

Աղյուսակ 10

20-59 տարեկան բնակչության անասկարապ կշիռը Անդրկովկասի քաղաքներում՝ 1897թ. (%-ով)

|    | Քաղաքներ      | Տղամարդիկ | Կանայք |
|----|---------------|-----------|--------|
| 1. | Թիֆլիս        | 58,95     | 49,17  |
| 2. | Բաքու         | 61,13     | 51,88  |
| 3. | Երևան         | 56,83     | 46,80  |
| 4. | Ալեքսանդրապոլ | 63,56     | 41,92  |
| 5. | Բաթում        | 72,65     | 51,31  |
| 6. | Գանձակ        | 48,31     | 44,41  |
| 7. | Քութայիս      | 49,56     | 44,37  |

Ինչպես երևում է աղյուսակից, կանանց թվաքանակը, տղամարդկանց համեմատ, պակաս էր, որը ռացատրվում է գյուղից քաղաք աշխատունակ բնակչության կենտրոնացվածությամբ: Սրա հետևանքով գյուղը զրկվում էր աշխատունակ ծեռքերից, և այնտեղ նկատվում էր արական սեռի բնակչության ծերացման գործընթաց<sup>2</sup>:

Աղյուսակ 11

Արտագնացության տեմպերը  
Հայաստանում 1925 թ.<sup>3</sup>

|    | Գավառներ     | Արտագնացների<br>թիվը |
|----|--------------|----------------------|
| 1. | Երևանի       | 3267                 |
| 2. | Լենինականի   | 3784                 |
| 3. | Լոռի-Փամբակի | 1319                 |
| 4. | Դիլիջանի     | 6533                 |
| 5. | Նոր Բայազետի | 5097                 |
| 6. | Զանգեզուրի   | 1907                 |
| 7. | Դարալագյազի  | 442                  |
| 8. | Մեղրիի       | 195                  |
| 9. | Էջմիածնի     | 1114                 |
|    | Ընդամենը     | 23655                |

<sup>1</sup> Աղյուսակը կազմված է՝ 2. Կոբկոտյան, Երևան քաղաքի ժողովրդագրությունը (1830-1930), Ե., 1930, էջ 57-ի տվյալների հիման վրա:

<sup>2</sup> «Մշակ», N119, 1899թ.:

<sup>3</sup> ՀԱՍՀ ԳՅՈՒՄ, ֆ. 123, ց. 42, գ. 38, թ. 14:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո արտագնացության ռարժր տեմպերը պահպանվեցին ինչպես Հայաստանում, այնպես էլ ամբողջ Խորհրդային Աիությունում: Երևույթը մաի պայմանավորված էր կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանի առանձնահատկություններով, որը բնութագրվում էր գործազրկության և ազրարային գերընակչության առկայությամբ:

Միայն առաջին հնգամյակի սկզբին խորհրդային երկրում գործազուրկների թիվը կազմում էր 1-1,5 մլն մարդ<sup>4</sup>, իսկ 1927-28թթ. ազրարային բնակչությունը՝ 9մլն մարդ<sup>5</sup>: Գործազրկության և ազրարային գերընակչության մեծ չափերը հիմք հանդիսացան արտագնացության ռարժր տեմպերի համար<sup>6</sup>:

1925թ. Հայաստանի բոլոր շրջաններից, ոչ լրիվ տվյալներով, արտագնացության է մեկնել 23,655 մարդ, որը, ըստ զավատների, ուներ հետևյալ պատկերը (տե՛ս աղ. 11): Արտագնացության տեմպերը շարունակում էրն ռարժր մնալ Լեռնային և մախալեռնային շրջաններում: Օայրահեղ սակավահողության պատճառով նրանք մորից մեկնում էրն արդյունարերական կենտրոններ աշխատանք փնտրելու<sup>7</sup>: Արտագնացության տեմպերը մեծ էրն Հայաստանում մաև 1926թ.: Այն կազմում էր մոտավորապես 65 հազար մարդ, որից 30 հազարն այդ տարի արտագնացության էրն մեկնել Հայաստանի սահմաններից դուրս, մեծ մասամբ՝ Բաքու և Թիֆլիս<sup>8</sup>: Բայց այնտեղ նրանց ոչ թուրին էր հաջողվում աշխատանք գտնել: Օրինակ՝ նշված թվականին Թիֆլիսի և Բաքվի գործազուրկների համապատասխանարար 32,3%-ը և 17,8%-ը հայեր էրն<sup>9</sup>:

<sup>4</sup> Розачевская Л.С., указ. соч., М., с. 49.

<sup>5</sup> Кржижановский Р.М., Избранное, М., 1957, с. 295.

<sup>6</sup> Գործազուրկների քանակը մեծ էր Երևանում և Լենինականում, 1926թ. նշված քաղաքներում հաշվառված գործազուրկների թիվը 85 հազար էր, իսկ 1929թ.՝ 120-125: Տարվա որոշակի ամիսներին (ապրիլ-հոկտեմբեր) սեզոնային բնույթ կրող աշխատանքների և արտագնացության պատճառով նրանց քանակը կրճատվում էր: Տե՛ս *խղաքեկյան Վ.*, նշվ. աշխ., էջ 242:

<sup>7</sup> Խորհրդային Հայաստան (1920-1925), Ե., 1926, էջ 112:

<sup>8</sup> Проблемы генерального плана Армении. Экономический вестник ССР Армении, 1927, N1, с. 14-15.

<sup>9</sup> Հայկական ՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պատ. փնտ. արխիվ (այսուհետ՝ ՀԱՍՀ ԳՅՈՒՄ ֆ. 163, ց. 2, գ. 32, թ. 1-23:

ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին խորհրդային երկրում սուր կերպով էր դրված արդյունաբերությանը, տրանսպորտին, շինարարությանը որակյալ մասնագետներով ապահովելու պահանջը: Օրինակ՝ 1928թ. շինարարական մի շարք կարևոր կառույցների համար պակասում էր 23 հազար քարտաշ, 10 հազար ծեփագործ, 5 հազար բետոնագործ և այլն<sup>1</sup>: Այդ խնդիրները խնդիրները իրականացնելու համար կառավարությունը մեծ ուշադրություն դարձրեց արտագնացությանը՝ նպաստելով կազմակերպված ձևով որակյալ կադրերի հավաքագրման գործընթացին: Այդ ընթացքում չէր բացառվում նաև արտագնացության տարերային ձևը: Բայց որակյալ կադրերի հավաքագրումը ընթանում էր շատ դանդաղ, որը պայմանավորված էր մի շարք պատճառներով: Նախ, արտագնացության չափերի կրճատումը սկզբնական շրջանում կապված էր կոլտնտեսությունների ձևավորման հետ, որի շուրջ համախմբվեցին չքավոր և միջակ գյուղացիները: Բացի դրանից, գյուղատնտեսական աշխատանքները մեքենայացված չէին. որի պատճառով նոր հողատարածքների յուրացման, անասնապահական ֆերմաների կառուցման և գյուղատնտեսական այլ աշխատանքների բնագավառում ընդգրկված էին մեծ թվով մարդիկ: Այդ գործում մեծ դեր կատարեցին նաև կոլտնտեսության ղեկավար մարմինների ձեռնարկած մի շարք արհեստական միջոցառումները: Արտագնացության մեկնելու համար նրանք արտագնացներին հեռացնում էին կոլտնտեսությունից, անասուններին չէին թողնում արոտավայրերը, նրանց ընտանիքի անդամներին չէին ընդունում կոլտնտեսության մեջ, արտագնացներին համարում էին դասալիքներ և այլն<sup>2</sup>:

Հաշվի առնելով այս բոլորը՝ ԽՍՀՄ Կենտգործկոմը և ժողտնտխորհը 1930թ. ընդունում են «Արտագնա արհեստների և սեզոնային

աշխատանքների արգելքների վերացման գյուղացիների ազատ տեղաշարժերի մասին» որոշումը, որով նախատեսվում էր արտագնացների նկատմամբ արհեստական արգելքների վերացում և ազատ արտագնացության պայմանների ստեղծում<sup>3</sup>: Այնուհետև, 1931թ. մարտին տեղի ունեցած ԽՍՀՄ խորհուրդների 6-րդ համագումարը, անդրադառնալով այդ հարցին, կոլտնտեսություններին պարտավորեցնում էր ոչ միայն չխանգարել, այլև աջակցել դրան<sup>4</sup>: Արտագնացների՝ տարբեր ձեռնարկությունների և կազմակերպությունների հետ կնքած համապատասխան պայմանագրի կատարման դեպքում նրանց տրվում էին նաև մի շարք արտոնություններ. արտագնացների աշխատավարձից կոլտնտեսության հասարակական ֆոնդերի համար պահումներ չէին կատարում, կոլտնտեսության գներով հատկացվում էր հացահատիկ, վերացվեց արտագնացների ընտանիքների նկատմամբ կիրառվող ամեն մի սահմանափակում, ձեռնարկությունը պարտավորվում էր վճարել նրանց ճանապարհածախսը և այլն: Անշուշտ, ընդունված այդ որոշումները մեծ իթան հանդիսացան զանգվածային արտագնացության համար և հանգեցրին գյուղից քաղաք ընակչության միգրացիայի մասշտաբների ավելացմանը. «Արտագնացության վերաբերյալ կառավարության այդ կարևոր որոշումը, գրում է Յու.Վ. Հարությունյանը, նշանակալի ազդեցություն ունեցավ գյուղից քաղաք կատարվող զանգվածային տեղաշարժերի համար»<sup>5</sup>: Արտագնացության մասշտաբների ընդլայնմանը իթանեց նաև գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացումը, որը չապահովեց գյուղացիների նյութական բարեկեցության մակարդակի բարձրացում, և կոլտնտեսությունների ստեղծման գործում թույլ տրվեցին մի շարք սխալներ: Այն պայմանավորված

<sup>3</sup> Об отходничестве ... Постановления Центрального исполнительного комитета и Совета Народных Комиссаров от 30 июня 1931г. – Соб. законов и распоряжений рабоче-крестьянского правительства СССР, отд. 1, 1931, №42, статья 286.

<sup>4</sup> Съезды Советов Союза ССР, Союзных и Автономных Советских Социалистических Республик. – Сборник документов в трех томах, т. III, М., 1960, с. 191.

<sup>5</sup> Арутюнян Ю.В., указ. соч., с. 110.

<sup>1</sup> Розачевская Л.С., указ. соч., с. 50.

<sup>2</sup> Арутюнян Ю.В., Коллективизация сельского хозяйства и высвобождение рабочей силы для промышленности. – В кн. Формирование и развитие советского рабочего класса (1917-1961), М., 1964, с.108.

էր նաև գյուղատնտեսության մեքենայացմամբ և ինդուստրացմամբ, որը կրճատեց գյուղատնտեսության ընագավառում աշխատուժի զբաղվածությունը:

Ինչպես երևում է աղյուսակ 12-ից, 1924-25թթ. մինչև 1926-1927թթ., արտագնացների թվաքանակը հասել էր 3 միլիոնի, 1927-28թթ.՝ մոտավորապես 4 մլն-ով ավելի էր, իսկ 1931թ.՝ 5,5 մլն մարդու: Բավական է նշել, որ միայն 1930-31թթ. մշտական ընակության համար գյուղից քաղաք է տեղափոխվել 9,5 մլն մարդ:<sup>1</sup> Բնակչության այսպիսի զանգվածային տեղաշարժերի հետևանքով կոլտնտեսությունները հաճախ որոշակի դժվարությունների էին հանդիպում դաշտային աշխատանքների կատարման, որակյալ կադրերի հոսունության հարցում: Այդ տեղաշարժերի կարգավորման համար 1933 թ. մարտի 17-ին ԽՍՀՄ Կենտգործկոմը և Ժողտնտխորիը ընդունում են «Կոլտնտեսություններում կազմակերպված աշխատանքի նոր կարգի մասին» որոշումը, որով նախատեսվում էի կոլտնտեսություններից հեռացնել բոլոր նրանց, ովքեր ինքնագլուխ, առանց թույլտվության, մեկնել են արտագնա աշխատանքի<sup>2</sup>: Այս որոշումը խոշոր նշանակություն ունեցավ արտագնացության հետագա տեմպերի կրճատման գործում:

Աղյուսակ 12

**Արտագնացների թվաքանակը  
ԽՍՀՄ-ում 1924-1931 թթ.<sup>3</sup>**

| Տարեթվեր  | Արտագնացների<br>թվաքանակը (հազ.<br>մարդ) |
|-----------|------------------------------------------|
| 1924-1925 | 2867,0                                   |
| 1925-1926 | 3285,0                                   |
| 1926-1927 | 3145,0                                   |
| 1927-1928 | 5451,0                                   |
| 1928-1929 | 4343,0                                   |
| 1931      | 5454,0                                   |

Հայրենական մեծ պատերազմի պատճառով, ընկանաբար, արտագնացության գործընթացը ընդհատվեց: Այն մեր երկրում

հետզհետե աշխուժացավ 1950-60-ական թթ., որը կապված էր պատերազմից հետո երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման, ինչպես նաև Ղազախստանի, Սիրիի, Ուրալի, Պոլսի և այլ շրջանների խամ ու խոպան հողերի յուրացման հետ, որին ակտիվ մասնակցություն ցուցաբերեց ողջ խորհրդային ժողովուրդը: 1970-ական թվականներին մոտավոր հաշվումներով ՀԽՍՀ-ից ամեն տարի սեզոնային արտագնացության է մեկնել մոտավորապես 35-40 հազար մարդ<sup>4</sup>:

Սեզոնային արտագնա աշխատանքի մասշտաբների ընդլայնման հետևանքով հատկապես Սիրիում և Ղազախստանում թույլ տրվեցին մի շարք խախտումներ աշխատավարձի և աշխատանքի ընդունման գործող կարգի վերաբերյալ: Այդ իսկ պատճառով ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը, անդրադառնալով դրան, 1973թ. հունիսի 19-ին ընդունեց «Կոլտնտեսականների սեզոնային աշխատանքի մեկնելու կարգի մասին» որոշումը, որով համձնարարվում էր հանրապետությունների Նախարարների խորհուրդին, երկրամասային և շրջանային գործադիր կոմիտեներին խիստ հսկողություն ապահովել արտագնացության վերաբերյալ գոյություն ունեցող որոշումների իրագործման նկատմամբ<sup>5</sup>:

Այսպիսով, ամրոցացնելով Հայկական ԽՍՀ-ում սեզոնային արտագնա աշխատանքի զարգացման պատմության վերաբերյալ վերը քննարկած նյութերը, այն կարող ենք բաժանել երեք շրջանի:

1. Նախահեղափոխական շրջան, որն ընդգրկում է XIX դարի երկրորդ կեսից մինչև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը: Այս շրջանը ընդգրկվում է բնակչության զանգվածային արտագնացությամբ, որին մասնակցում էին Սրևեյան Հայաստանում ապրող տարբեր սոցիալական և էթնիկական խմբեր: Այդ գործընթացն առավել ինտենսիվորեն էի տեղի ունենում Հայաստանի

<sup>1</sup> Там же, с. 102.

<sup>2</sup> О новом порядке организованного труда в колхозе. — Собрание законов и распоряжений рабочекрестьянского правительства СССР. Отдел I, 1933, N 21, статья 116.

<sup>3</sup> Арутюнян Ю.В., указ. соч., с. 102.

<sup>4</sup> *Վկազան 9.*, Հայկական ՍՍՀ բնակչությունը, Ե., 1975, էջ 143:

<sup>5</sup> Об упорядочении отходничества колхозов на сезонные работы. Постановление Совета Министров СССР от 19 июня 1973г., N421. — Собрание Постановлений правительства СССР, 1973, N15, с. 84.

լեռնային և նախալեռնային գոտու գյուղական ընկերության շրջանում: Այս շրջանում որպես արտագնացության դրդապատճառ հանդես էր գալիս փոխկապակցված գործոնների մի ամբողջ շարք, որի հետևանքով այն ընկերության մեծամասնության համար դառնում էր ընտանիքի նյութական նվազագույն պահանջումները թավարարելու կարևորագույն աղբյուրներից մեկը: Արտագնացությունը խթան էր նաև ընկերության տարածքային շարժունության համար և նրանց կապեց Անդրկովկասի մի շարք քաղաքների հետ, որոնք, ընկերության առևտրաարդյունաբերական կենտրոններ լինելուց, համարվում էին ժամանակի հասարակական, քաղաքական և մշակութային կյանքի խոշոր օջախներ: Միաժամանակ արտագնացությունը էթնիկական տարրեր ընդհանրությունների՝ հայերի, վրացիների, ադրբեջանցիների, ռուսների, պարսիկների և այլ ազգությունների միջև ապահովեց ակտիվ շփումներ՝ նպաստելով նրանց աշխարհայացքի ձևավորմանը և դասակարգային պայքարի համախմբմանը: Այն Հայաստանում նպաստեց գյուղական շրջաններում գոյություն ունեցող նահապետական գերդաստանների քայքայման գործընթացի արագացմանը:

Այս ժամանակաշրջանի վերաբերյալ ազգագրագետների հավաքած դաշտային նյութերի քննարկումից պարզվում է, որ չնայած գյուղական ընկերության կայուն էթնիկական ավանդույթների և խիստ նորմերի առկայու-

թյանը, այնուհանդերձ, արտագնացի երկարատև ընկերությունը երբեմն հանգեցնում էր ամուսնալուծությունների: Առանձնապես ընտանիքի համար ծանր հետևանքներ էին ունենում սեռական ընկերության հիվանդությունները, որոնք իրենց հետ բերում էին արտագնացները: Արտագնացությունը հանգեցրեց նաև Արևելյան Հայաստանի ընկերության սեռատարիքային կազմի փոփոխությունների:

2. Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից մինչև Հայրենական մեծ պատերազմն ընկած ժամանակահատվածը: Հասարակական-քաղաքական կարգերի փոփոխության՝ արտադրության և հանրային սեփականության հաստատման շնորհիվ փոփոխվեցին ինչպես արտագնացության դրդապատճառները, այնպես էլ ընկերության կազմակերպությունը, ընկերության մի շարք օրյակտիվ պատճառներով այս շրջանում պահպանվեցին դրա համեմատական ընկերության տեմպերը:

3. Հետպատերազմյան ժամանակաշրջան: Իր ընդունած մեծ մասշտաբներով մի շարք տնտեսական շրջաններում արտագնացությունը երկրի ժողովրդական տնտեսության մեջ, որտեղ զգացվում էր աշխատանքային ռեսուրսների խիստ պակաս, կատարում էր կարևորագույն գործառույթ՝ ապահովելով որակավորում ունեցող շինարար մասնագետներով: